

## **Կոտայքի մարզպետը ներկա է գտնվել Ջրվեժ համայնքում Քաղաքացիների սպասարկման գրասենյակի բացմանը**

27.09.201

Սեպտեմբերի 26-ին Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տեղի ունեցավ Քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՍԳ) պաշտոնական բացման արարողությունը:

Իր խոսքում մարզպետը կարևորել է մարզի խոշորացված լավագույն համայնքներից մեկում նման կենտրոնի առկայությունը: «Մեր բոլոր գործողությունների, որոշումների հիմքում մենք որպես ելակետ ունենք մեկ գերնպատակ՝ Կոտայքի մարզի բնակչի վերափոխումը ՀՀ քաղաքացու: Ես այդ գործում առանձնահատուկ կարևորություն եմ տալիս մեր եվրոպացի գործընկերների, գործընկեր կառավարությունների հայաստանյան ներկայացուցչությունների իրականացրած ծրագրերը մեր համայնքներում: Այս կենտրոնի բացումը մեկ քայլ առաջ եմ համարում ոլորտում արևմտյան լավագույն փորձը տեղայնացնելու ճանապարհին», - նշել է Ռոմանոս Պետրոսյանը:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնումը թույլ է տալիս «մեկ պատուհան» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարաններում իրականացվող վարչական գործընթացները: Քաղաքացիների սպասարկման գրասենյակը կապահովի համայնքային ծառայությունների մատուցումը «լավ կառավարման» սկզբունքների համաձայն:

Գրասենյակը հիմնվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ: